ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ 471 Ա

«30» մարտի 2026թ. ք. ԷՋՄԻԱԾԻՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀԱՅԹԱՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թ. մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաղարշապատի համայնքապետարանի «Հայթաղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում /այսուհետ՝ ՀՈԱԿ/ առկա է տնօրենի թափուր պաշտոն, իսկ դրա համալրումը անհրաժեշտ է ՀՈԱԿ-ի լիարժեք աշխատանքային գործունեության համար

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2026 թվականի ապրիլի 30-ին՝ ժամը 11:00-ին, Վաղարշապատի համայնքապետարանի «Հայթաղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ:
2. Ապահովել անցկացվող մրցույթի հայտարարության հրապարակումը http:/www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի, ինչպես նաև Վաղարշապատի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում և փակցնել համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:
3. Տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացման անմիջական պատասխանատու նշանակել աշխատակազմի քարտուղարին:
4. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմերին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
30 մարտի 2026 թվականին
Ք. Էջմիածին